



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի  
Մ Ա Ր Ձ Պ Ե Տ**

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. (374010) 287401, (3740281) 2 25 22

„ 11 „ „ 06 „, 2014թ

N 01/07-1/2841-14

Ֆաքս (374010) 28 18 32

**« ՓՈՒՎԱՐՉԱՊԵՏ, « ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՊԱՐՈՆ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն փոխվարչապետ

Ի պատասխան Ձեր 2014թ. հունիսի 10-ի «Ի պատասխան <<<< կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> որոշման նախագծի վերաբերյալ» թիվ 01/15/3000-14 հանձնարարականի և ի լրումն մեր 2014թ. հունիսի 6-ի թիվ 01.2/07.1/2786-14 գրության հայտնում ենք, որ « կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման N10 հավելվածի Եղեգնաձորի տարածաշրջանի 3-րդ կետով սահմանված «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվեկշռում գտվող «Աղավնաձորի ամբուլատորիա» ՓԲԸ-ի նախկին շենքի տարածքը առ այսօր չհանձնելու պատճառը է այն, որ շենքը չի ունեցել պետական սեփականության իրավունքի գրանցման վկայական: Այն չափագրվել ու « ԿԱ ԱԳԿ Եղեգնաձորի տարածքային ստորաբաժանման կողմից պետական սեփականության իրավունքի գրանցման վկայական է ստացել միայն 2012թ. նոյեմբերի 5-ին, իսկ մինչ այդ «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով հնարավորություն չի ունեցել իրականացնելու վերը նշված աշխատանքները:


Ինչ վերաբերվում է « ԿԱ պետական գույքի կառավարման վարչությանը հանձնվող տարածքի գրեթե կիսով չափ փոքրացմանը, ապա դա «

կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման N 10 հավելվածում  
Եղեգնաձորի տարածաշրջան բաժնի 3-րդ կետով նշված 1300 քառ.մետր  
տարածքի սխալ չափագրման արդյունք է, այն ամրագրվել է կառավարության  
որոշման մեջ առանց սեփականության իրավունքի վկայականի: Իրականում  
շենք-շինությունների մակերեսի (տարածքի) կիսով չափ փոքրացում տեղի չի  
ունեցել: Ներկայացված 1300 քառ.մետր մակերեսի և սեփականության  
իրավունքի վկայականում նշված 757,17 քառ.մետրի տարբերությունը, որը  
կազմում է 542,83 քառ.մետր առաջացել է նրանից, որ ամբուլատորիայի  
նախկին շենքը չափագրվել է ներսի օգտագործման մակերեսով ինչը կազմում է  
757,17 քառ. մետր, սակայն 2006թ.-ին կառավարության որոշումը կազմելիս  
ներկայացվել է դրսի մակերեսի չափերով՝ 936,24 քառ.մետր, տարբերությունը  
կազմում է 179,07 քառ.մետր: Մնացած 363,76 քառ.մետր տարբերությունը  
առաջացել է նրանից, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2002թ. հունիսի 6-ի N88  
որոշմամբ արդեն իսկ սեփականաշնորհված են եղել լվացքատան,  
կաթսայատան, ճաշարանի և ազբոշիֆերյա ծածկի մակերեսները Աղավնաձոր  
համայնքի բնակիչներ Լ. Այվազյանին և Ա. Հակոբյանին:

Վերոնշյալ սեփականաշնորհված տարածքները սխալմամբ ներառվել է ՀՀ  
կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 10-րդ հավելվածի 3-  
րդ կետում, իրականում 757,17 քառ.մետրի փոխարեն ամրագրվել է 1300  
քառ.մետր տարածք:

Կրկին անգամ խնդրում ենք կառավարության քննարկմանը ներկայացնել  
մեր կողմից ներկայացված որոշման նախագիծը և վերջնական լուծում տալ  
հարցին:

Հարգանքներով՝

 Է. ՂԱԶԱՐՅԱՆ